ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N---- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 9-րդ փողոցը /սկսվում է Արշակունյաց պողոտայից հասնում Տարոնցու փողոց/ անվանակոչել հասարակական, քաղաքական գործիչ Շահամիր Շահամիրյանի անվամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի, ինչպես նաև վարչական շրջանի Ն.Շենգավիթի 9-րդ փողոցի բնակչության կողմից առաջարկություն է ներկայացվել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ն.Շենգավիթի 9-րդ փողոցը հասարակական, քաղաքական գործիչ Շահամիր Շահամիրյանի անվամբ անվանակոչելու վերաբերյալ:

Հասարակական, քաղաքական գործիչ Շահամիր Շահամիրյանը ծնվել է 1723թ. Նոր Ջուղայում, հետագայում գաղթել է Հնդկաստան և հաստատվել Մադրաս քաղաքում: Նախ դերձակություն է արել, ապա զբաղվել է առևտրով:
Նրա հայացքների ու գործունեության վրա մեծ ազդեցություն է ունեցել Մադրասում հաստատված հայ ազատագրական ու լուսավորական գործիչ Մովսես Բաղրամյանը:

Շահամիր Շահամիրյանը 1771թ. Մադրաս քաղաքում հիմնել է հայկական տպարան: 1772թ. այդ տպարանում լույս է տեսել Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գիրքը: Հայ իրականության մեջ դա առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունն էր:

1786թ. «Նոր տետրակը» թարգմանվել է ռուսերեն և լույս է տեսել Պետերբուրգում, իսկ այնուհետև թարգմանվել է նաև վրացերեն:

Շարունակելով «Նոր տետրակի» գաղափարները՝ Շահամիր Շահամիրյանը հրատարակել է «Որոգայթ փառաց» գիրքը:

«Որոգայթ փառաց» գիրքը սահմանադրական հանրապետություն ստեղծելու ծրագիր էր և հայ քաղաքական մտքի կարևոր նվաճումներից մեկը:

Շահամիր Շահամիրյանը մահացել է 1798թ. Մադրաս քաղաքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Շահամիր Շահամիրյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Շահամիր Շահամիրյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ